Դարձեալ Ամդեցիի Օրագրութենէն (Երուսաղէմի մէջ գրուած) կը քաղենք Տէր Կոմիտասի վերաբերեալ կտորները։ 1701 Հոկտ. 5 Կիր. «Պատարագին Կոմիտասն ծանուցում» (թղ. 259ա)։ — Դեկտ. 25. «Յետ սեղանին աբեղայք կուլ. Վանեցին եւ Կոմիտաս զմիմեանս ծեծ, եւ ես զՎանեցին եւ զՊօղոս աբեղան ծեծեցի» (թղ. 261բ)։ — 1702 Փետր. 1, Կիր. «Ժամարար Տէր Կոմիտասն» (թղ. 262բ)։ — Մարտի սկիզբները Ամդեցի կը հիւանդանայ և նոյն ամսուան 12ին կը գրէ. «Գ օր եղեւ Կոմիտասն Նարեկ կու կարդայ ի վերայ իմ» (թղ. 263բ)։

Այստեղ կ'աւարտին Ամդեցիի Օրագրութեան Տէր Կոմիտասի վերաբերեալ յուշագրութիւնները։ Անիկա

ղէմ դառնալուն առիթով իրեն կ'ընկերացնէ Տէր Կոմիտասը՝ իր սիրելին ու մտերիմը, որ անշուշտ իբրև բարեպաշտ քահանայ մը կը ցանկար կենդանի աչքով տեսնել Երուսաղէմը ու երկրպագել Տնօրինական Սրբավայրերուն։ Հալածանքի որևէ պարագայ գոյութիւն չունի այստեղ. եթէ ունենար՝ Ամդեցի անպատճառ այդ մասին յիշատակութիւն մը կը ձգէր իր Օրագրութեան մէջ, մանաւանդ ինք ևս, որ կաթոլիկամիտ կը կարծուէր, առարկայ ըլլալու էր հալածանքի, մինչ ընդհակառակը՝ Պոլսեցիք, որոնք աշխատած էին իր պատրիարքական հրովարտակը նորոգել, պատիւով ու մեծարանքով յուզի կը ղնեն զինք։

Ի զէպ յիշենք՝ թէ Ամդեցի ևս ժամանակակից եկեղեցականներէ ոմանց նման (Մելքիսեդեկ, Եղիազար, Նահապետ կաթողիկոսներ և այլք) սիրալիր յարաբերութիւններ կը մշակէր կաթոլիկ կղերին և նոյնիսկ պապական աթոռին հետ, առանց սակայն Հայ առաքելական Ս. Եկեղեցւոյ դաւանութենէն ու ծէսերէն շեղելու, ու ատոր համար ետքէն իբրև կաթոլիկամիտ ամբաստանուած էր Կ. Պոլսոյ պատրիարք Աւետիք Եւդոկիացիէն ու վար առնուած էր աթոռէն։ Կը գրէ Ամդեցի յերուսաղէմ իր Օրագրութեան մէջ. 1703 Փետր. 23. «Աւետիք վարդապետն մեզ գիր խրատական եւ սպառնական եւ ողոքական՝ թէ մեք ֆռանկ եմք դարձեր, զոր անիծեալ լիցի ամենայն հայ որ թողու զլուսաւորչի օրէնքն եւ ֆռանկ դառ-